

աշակերտին մէջ կանուխէն գոյացած սէրը ներշնչած էր ուսուցչին գալ անապատին խորը ու տեսնել փառքը իր աշակերտին, որ այլ եւս կը նկատուէր երփներանգ եւ հոտաւէտ ծաղիկ մը՝ Անապատի հոգեւոր բուրաստանին մէջ:

430 ին Սիդոնիոս Մելիտինէէն այցելութեան կու գար Սահէլ, Եւթիմիոսի մօտ. ան կը տեսնէր Անապատականին մեծ յաջողութիւնները, թէև վերջինս կը ջանար ծածկել գոյնս իր համեատութեան պատմուճանին տակ: Քիչ ժամանակ յետոյ, Մելիտինէէն ժամանեցին Սիդոնիոսի եղբորորդիները, երեք համարիւն եղբայրներ, Ստեփանոս, Անդրեաս և Գայիանոս, որոնք անտարակոյս իրենց հօրեղբոր աշակերտած էին Մելիտինէի ընծայարանին մէջ և ուսած էին այն ուսումները, զոր արդէն Եւթիմիոս ստացած էր նոյն դպրոցին մէջ: Հայրենակցութեան կը միանար համանման ուսման մը եղբայրակցութիւնը. այդ պատճառու Մեծ Անապատականին սէրն ու գորովը աւելի օգտակար պիտի ըլլային հայազգի նորեկ Մելիտինեցիներուն նկատմամբ: Այս երեք եղբայրներուն անդրոնիկը Յամնիայի (ձովեզերեայ քաղաք Յոպպէի եւ Գազայի մէջ տեղ) եպիսկոպոս կը ձեռնադրուի, երկու տարի սարկաւազ մնալէ յետոյ. կրտսերը՝ Գայիանոս կը գրաւէ Արաբիոյ մէջ, Մատապայի եպիսկոպոսական աթոռը. իսկ երկրորդ եղբայրը՝ Անդրէաս՝ վանահայր կը նշանակուի Երուսաղէմի Ս. Մինաս վկային մատրան. ինչպէս կը հաւատտէ Սկիւթուպոլսեցին: Երեք եղբայրներուն պաշտօնն ու զիրքը շատ կարեւոր էին. մանաւանդ հայազգի Անդրէաս կրօնաւորին Ս. Մինասի մատրան վանահայրութիւնը Ե. գարու կիսուն, կ'ապացուցանէ Հայոց Ս. Մինաս մատրան դոյութիւնը Ս. Յակոբի եկեղեցւոյն մէջ, ուր կը մնայ ան մինչեւ ցայսօր, իր ճարտարապետական հումանի կառուցուածքովը. ուրեմն արժանի է դիտել թէ որ թուականէն կ'սկսի Ս. Յակոբի ուխտին յարակից Ս. Գլխողրին եւ Ս. Մինասի դամբարանաց յիշատակը: Եւթիմիոսի վանքին մէջ հայ ուսուցչի մը և երեք հայազգի եղբայրներուն ներկայութիւնը չէ միայն որ մեզ խանդավառութիւն կը պատճառէ. հոն տեղի ունեցած է նաեւ ոչ նուազ պատմական իրողութիւն մը, որ կրնայ նկատուիլ ազգային փառք մը կամ պորձանք մը: Հինգերորդ գարու կիսուն Մելիտինեցի չորս հարիւր ուխտաւոր Հայեր կ'այցելեն Երուսաղէմի Ս. Տեղերը, կը յիշեն Մելիտինեցի